ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 21.02.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2019/17

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.01.2019թ. թիվ 26-3/933-19 գրությամբ Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 17.01.2019թ. թիվ 7/03.3/286-19 գրության հիման վրա, 25.01.2019թ. թիվ 26-3/933-19 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանին (այսուհետ՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 07.02.2019թ. գրությամբ Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանը հայտնել է, որ 07.12.2018թ. ՀՀ արտակարգ իրավիճակի նախարարության կողմից հայտարարվել է ընթացակարգ ընտանի կենդանիների չոր կերերի ձեռքբերման նպատակով:

Մասնակիցը սույն ոլորտում իրականացնում է իր գործունեությունը շուրջ 27 տարի: Հաշվի առնելով ոլորտում մասնագիտական փորձառությունը և ձեռքբերած հմտությունները և ծանոթանալով տվյալ ընթացակարգի գնվող առարկայի տեխնիկական բնութագրին, մինչև ընթացակարգի հայտերի բացման սկիզբը Մասնակիցը դիմել է պատվիրատուին, որպեսզի վերջինս պարզաբանի նշված կերերի հնարավոր նմանատիպությունը, քանի որ այն գրված էր խստրական և սահմանափակում էր նմանատիպ կերերի մատակարարման հնարավորությունը: Մասնակիցը դիմել է գրավոր և բանավոր ՀՀ ՖՆ:

Գրության բովանդակությունը հետևյալն էր, որ այդ տեխնիկական բնութագիր ունեցող ապրանքից աշխարհում արտադրում է միայն մեկ կազմակերպություն, տեխնիկական բնութագիրը գրված էր շատ մանրամասն, ցուցանիշները նշված էին առանց հնարավոր սանդղակների տատանումների, գրության մեջ տրված էր նաև հարցադրումներ, որոնց սակայն Ընկերությունը պատասխան չի ստացել (առաջին հարցման պատասխանը ստացվել է ոչ լիարժեք, հետևաբար Մասնակիցը գրել է երկրորդ պարզաբանումը, որին նույնպես պատասխան չի ստացվել): Պատասխան չի ստացվել նաև ՀՀ ՖՆ-ին:

Տվյալ կերն արտադրվում է 1 կազմակերպության կողմից աշխարհում, որը Հայաստանում ունի մեկ ներկայացուցիչ, ինչը նշանակում է, որ աճուրդը հայտարարված է առանց մրցակցային հիմքունքներով և միայն մեկ մասնակցի համար:

Հաշվի առնելով, որ նմանատիպ գործառույթ ապահովում են բազայում այլ կեր արտադրող կազմակերպություններ (հատկապես ակտիվ շների համար), որոնք ներկրվում են Հայաստան կամ ԵԱՏՄ երկրներ, Մասնակիցը ևս մեկ անգամ պնդում է, որ նման տեխնիկական բնութագիր ունեցող մրցույթը պետք է հայտարարվի չկայացած և վերահայտարարվի նորը՝ մրցակցային հիմունքներ պարունակողը: Բացի այդ Մասնակիցն

ընդունում է, որ չիմացության պատճառով չեն ներկայացրել բողոք Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, սակայն գրել է ոլորտը համակարգող լիազորված մարմին հանդիսացող պետական կառավարման մարմնին, որն առնվազն կարող էր պատասխան գրությամբ ուղղորդել կամ գրությամբ ցույց տալ քայլերի անճշտությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մասնակցի մասնակցությունը կրում էր միայն դեկլարատիվ բնույթ, քանի որ Մասնակիցը անընդհատ սպասում էր պատասխանների պատասխանատու կառույցներից, սակայն ապարդյուն:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանը հանդիսանում է ՓՄՁ, բացի այդ վերջինս առաջին անգամ է մասնակցում գնումների բողոքարկման գործընթացին, Մասնակիցը խնդրել է վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Մասնակիցը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/17 ընթացակարգի շրջանակներում 31.01.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությունը (այսուհետ՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 17.01.2019թ. թիվ 7/03.3/286-19 գրությամբ հայտնել է, որ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից կազմակերպված «ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/1» ծածկագրով ԷԱՃ գնման ընթացակարգի շրջանակներում առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչված Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանին ծանուցվել է, որպեսզի վերջինս ներկայացնի ձեռքբերվող ապրանքի ամբողջական նկարագիրը: Սակայն, համաձայն ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ Կարգ) 23-րդ կետի, մասնակցի կողմից ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ, որոնք ենթակա էին շտկման (տեխնիկական

բնութագիրը հստակ և մանրամասն չէր նկարագրում ձեռքբերվող ապրանքը, իսկ ապրանքի անվանումը չէր համապատասխանում հրավերով սահմանված գնման առարկայի անվանմանը):

Մասնակցի կողմից ներկայացվել է շտկված տարբերակը, որը դարձյալ չէր համապատասխանում հրավերի պահանջներին (գնման ընթացակարգի ծածկագիրը սխալ էր լրացված):

Հիմք ընդունելով Կարգի 24-րդ կետի 2-րդ ենթակետը մասնակցի հայտը մերժվել է:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2019/17 ընթացակարգի շրջանակներում 31.01.2019թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2019/17 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2019/17 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար ընտանի կենդանիների կերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանը:

2. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 27.12.2018թ. ժամը 15:25-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է սահմանված ժամկետում և կարգով հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.01.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացված հավելված 3-ում՝ տեխնիկական բնութագրում, առկա է անհամապատասխանություն. տեխնիկական

բնութագիրը հստակ և մանրամասն չի նկարագրում ձեռքբերվող ապրանքն, իսկ ապրանքի անվանումը չի համապատասխանում հրավերով սահմանված գնման առարկայի անվանմանը:

4. Աճուրդի գնահատող հանձնաժողովի 15.01.2019թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 4/1 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից որպես շտկված փաստաթուղթ ներկայացված տեխնիկական բնութագրում ընթացակարգի ծածկագիրը սխալ է լրացված:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 25.01.2019թ. թիվ 26-3/933-19 գրությունը, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության 17.01.2019թ. թիվ 7/03.3/286-19 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 34-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո հրավերով սահմանված ժամկետում առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

ՀՀ կառավարության 18.05.2017թ. N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 19-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ Աճուրդն ամփոփվելուն հաջորդող աշխատանքային օրը գնահատող հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից հաշված երեք աշխատանքային օրվա ընթացքում համակարգի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի, ինչպես նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը:

Կարգի 22-րդ և 23-րդ կետերի համաձայն՝

22. Սույն կարգի 19-րդ կետով սահմանված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների

երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նպատակով նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

23. Առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում քարտուղարը նույն օրը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կարիքների համար ընտանի կենդանիների կերի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/1» ծածկագրով էլեկտրոնային աճուրդ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանը:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 27.12.2018թ. ժամը 15:25-ի նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանը ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից, որին ծանուցվել է սահմանված ժամկետում և կարգով հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 11.01.2019թ. ժամը 11:30-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Մասնակցի կողմից ներկայացված հավելված 3-ում՝

տեխնիկական բնութագրում, առկա է անհամապատասխանություն. տեխնիկական բնութագիրը հստակ և մանրամասն չի նկարագրում ձեռքբերվող ապրանքն, իսկ ապրանքի անվանումը չի համապատասխանում հրավերով սահմանված գնման առարկայի անվանմանը:

Աճուրդի գնահատող հանձնաժողովի 15.01.2019թ. ժամը 15:30-ի նիստի թիվ 4/1 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակցի կողմից որպես շտկված փաստաթուղթ ներկայացված տեխնիկական բնութագրում ընթացակարգի ծածկագիրը սխալ է լրացված:

Այսպիսով՝ Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Մասնակիցն Աճուրդի գնահատող հանձնաժողովին ներկայացրել է տեխնիկական բնութագրի շտկված տարբերակը, որում Աճուրդի «ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/1» ծածկագրի փոխարեն նշված է եղել «ՀՀ ԱԱԾ-ՏՆՏՎ-ԷԱՃ-4/19-ՍՆՆԴԱՄԹԵՐՔ» ծածկագիրը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Հրավերի 7-րդ կետի 7.12-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ուսումնասիրելով Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում արձանագրված վրիպակը՝ կապված ընթացակարգի ծածկագրի հետ, գտնում եմ, որ այն չի կարող դիտարկվել որպես Մասնակցի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և Հրավերի 7-րդ կետի 7.12-րդ ենթակետով նախատեսված պարտավորության խախտում և հիմք հանդիսանալ

Մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Մասնավորապես, գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ Մասնակցի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում, որից հետո վերջինս ծանուցվել է անհամապատասխանությունները շտկելու վերաբերյալ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում ներկայացվել է շտկված փաստաթուղթը, որում սակայն տեղի է ունեցել վրիպակ՝ ծածկագիրը սխալ է նշվել: Նման պայմաններում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտնում է, որ նշված վրիպակը էական չէ և չի կարող բավարար հիմք հանդիսանալ Մասնակցի կողմից գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտման փաստն արձանագրելու համար, քանի որ Մասնակիցը փաստացի կատարել է իր պարտավորությունը և ներկայացրել է հրավերով նախատեսված շտկված փաստաթուղթը, որի հետ կապված այլ թերություններ չեն արձանագրվել գնահատող հանձնաժողովի կողմից:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 25.01.2019թ. թիվ 26-3/933-19 գրությամբ Ա/Ձ Գաբրիել Գաբրիելյանին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**